

Փոխմարզպետ Նունե Մովսիսյանը մասնակցեց Մանուկների բարեգործական հիմնադրամի եւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի քննարկումներին

Հոկտեմբերի 14-ին փոխմարզպետ Նունե Մովսիսյանը Երեւանի Արամ Խաչատրյանի թանգարանում մասնակցեց Մանուկների բարեգործական հիմնադրամի /COAF/ կողմից կազմակերպված հանդիպմանը, որին մասնակցում էին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման ղեկավար Արմեն Գետրոգյանը, ՀՀ-ում ԱՄՆ-ի, Ռումինիայի, Լիբանանի դեսպանները, այլ պաշտոնյաներ:

Ամփոփվեց վերջին 10 տարվա ընթացքում COAF-ի կողմից իրականացված ծրագրերը, արվեցին համապատասխան դիտարկումներ, տրվեցին գնահատականներ: Այնուհետեւ ներկայացվեց առաջիկա տարիներին նախատեսվող ծրագրերի ընդհանուր նկարագիրը: Այն իր մեջ ներառելու է շուրջ 100 համայնք, որտեղ իրականացվել եւ լայնածավալ ծրագրեր:

Նունե Մովսիսյանը հոկտեմբերի 15-ին մասնակցեց նաեւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից կազմակերպված հանդիպմանը: Ներկայացվեց ծրագրի կողմից 2005-2013 թթ. իրականացված ծրագրերը, քննարկվեցին նոր նախագծերը:

Երկու հանդիպումների ժամանակ փոխմարզպետը նախնական որոշակի պայմանավորվածություններ ձեռք բերեց մարզի համայնքներում առկա հիմնախնդիրների՝ համատեղ լուծման շուրջ: